

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

2022թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը անհրաժեշտության դեպքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը **հանձնարարում է մի քանի դատախազների՝ նշանակելով դատախազների խմբի ղեկավար:**

Բացի հիշատակված նորմից, օրենսդիրը որևէ կերպ չի կանոնակարգել դատախազական խմբին վերաբերող հարցերը: Մասնավորապես՝ օրենսդրությամբ նախատեսված չէ դատախազական խումբ ստեղծելու հիմքերը (քննչական խմբի պարագայում դրանք նախատեսված են՝ վարույթի բարդությունը կամ դրա ծավալների մեծությունը), և որ ամենակարևորն է՝ խմբի ղեկավար և անդամ դատախազների փոխհարաբերությունները ու լիազորությունները (քննչական խմբի պարագայում դրանք կանոնակարգված են):

Նշված օրենսդրական կարգավորումների բացակայությունը գործնականում կարող է հանգեցնել մի շարք խնդիրների. օրինակ՝ մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով խմբի ղեկավարը գտնի, որ մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ խմբի անդամ դատախազը (դատախազները) գտնեն, որ ենթակա չէ հաստատման և այլն:

Հետևաբար, կարծում ենք, որ ինչպես քննչական խմբի պարագայում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183, 184 հոդվածներ), այնպես էլ դատախազների խմբի պարագայում պետք է հստակ սահմանվի դրա ստեղծման հիմքերը և որ ամենակարևորն է՝ խմբի ղեկավար և անդամ դատախազների լիազորությունների շրջանակը:

«Դատախազության մասին» ՀՕ-198-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին, ուժի մեջ մտել՝ 2018 թվականի ապրիլի 9-ին: Օրենքի գործողության շուրջ 3 տարիների ընթացքում առաջ են եկել որոշակի խնդիրներ, որոնց վերաբերյալ Օրենքի կարգավորումները պարունակում են տարրնթերցումներ, օրենսդրական բացեր և ներքին հակասություններ: Բացի այդ, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՕ-207-Ն օրենքի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն հստակեցնել ՀՀ դատախազության կառուցվածքին վերաբերող՝ Օրենքում առկա կարգավորումները: Հարկ է արձանագրել նաև «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ հրամանով հաստատված գործողությունների ծրագրով առկա են ՀՀ դատախազության

բարեփոխումներին առնչվող որոշակի կետեր, որոնց իրացումը հնարավոր է ապահովել Օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով: Այսինքն, «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների արդյունավետ իրացումն օրենսդրության մեջ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումների բնույթը կայանում է հետևյալում.

1. Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասում առկա «խախտումներ» եզրույթը անորոշ է և հասկանալի չէ, թե տվյալ եզրույթը վերաբերում է քրեադատավարական կամ քրեական օրենքի խախտումներին, թե նաև դատախազի վարքագծի կանոնների խախտումներին: Քանի որ բոլոր դեպքերում տվյալ խախտումները վկայում են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքերի մասին, ուստի առաջարկվում է «խախտումներ» եզրույթը փոխարինել «դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր» բառերով:

2. Նախատեսվում է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմից հանել Արդարադատության ակադեմիայի ռեկտորին, քանի որ գործող կարգավորումների պայմաններում կարող են առաջանալ շահերի բախման իրավիճակներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը առանցքային դերակատարում ունի դատախազների թեկնածությունների ցուցակի կազմման, ինչպես նաև դատախազների ատեստավորման գործընթացում, իսկ մյուս կողմից Արդարադատության ակադեմիան իրականացնում է դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը և դատախազների վերապատրաստումը:

Նախատեսվում է սահմանել նաև հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և դադարման կարգը՝ հաշվի առնելով որոշակի օբյեկտիվ պայմաններ:

3. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը բողոքարկելու դատախազի պարտականությունը, եթե տվյալ դատական ակտերը դատախազի կարծիքով հիմնավոր չեն կամ ապօրինի են: Այսինքն, դատախազի՝ տվյալ դրույթով նախատեսված բողոքարկման պարտականությունը սահմանափակվում է միայն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերով: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է հատուկ վերանայման կարգով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված մի շարք դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը: Վերոգրյալի հիման վրա առաջարկվում է Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասից հանել «օրինական ուժի մեջ չմտած» եզրույթը՝ դատախազների նշված պարտականությունը քրեադատավարական օրենքի կարգավորումներին համապատասխանեցնելու նպատակով:

4. Պետական շահերի պաշտպանության ոլորտում առկա կարևոր խնդիրներից մեկը կայանում է հետևյալում.

ՀՀ Սահմանադրությամբ և Օրենքով «պետական շահ» արտահայտության հասկացության սահմանում տրված չէ և երբեք էլ չի եղել, ինչն էլ հանգեցրել է նրան, որ դրա հասկացության վերաբերյալ միասնական մոտեցում չի ձևավորվել տեսության մեջ:

Ավելին, տեսական հարթությունում առկա անորոշությունը, օրենսդրական բացը բերել է այդ արտահայտության տարածական, երբեմն էլ՝ ծայրահեղական, «բացարձակ ընդարձակ» և «բացարձակ նեղ» մեկնաբանությունների նաև պրակտիկայում:

1995թ. ՀՀ Սահմանադրությամբ, դրա հիման վրա ընդունված Օրենքով, ի տարբերություն դատախազության այլ հսկողական գործառույթների, ի սկզբանե սահմանվեց քրեաիրավական ոլորտից դուրս դատախազության խիստ սահմանափակ գործառույթ՝ առանց հսկողական բաղադրիչի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայցի հարուցում՝ չսահմանելով սպառիչ հիմքեր և ընթացակարգեր: Այդ բացը որոշ չափով փորձ արվեց լրացնել «Պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2005թ. հոկտեմբերի 28-ի թիվ ՆՀ-189-Ն հրամանագրով, մինչդեռ 2015թ. Սահմանադրության փոփոխություններով (176-րդ հոդվածի 3-րդ մաս) սահմանվեց, որ «Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան» ու թեև Սահմանադրության փոփոխությունների հեղինակների հիմնավորումներով նման ձևակերպումը ընդամենը փաստացի առկա վիճակի սահմանադրական ամրագրումն էր, սակայն նոր օրենքով ոչ միայն էապես կրճատվեցին պետական շահերի պաշտպանության ոլորտի՝ առանց այդ էլ սահմանափակ լիազորությունները, այլև ավելի խորացվեցին օրենսդրական անհստակությունները, թերությունները: Ավելին, ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ Նախագահի 2005թ. հոկտեմբերի 28-ի թիվ ՆՀ-189-Ն հրամանագիրը:

Օրենքով պետական շահերի պաշտպանության ոլորտի գործառույթն էլ ավելի սահմանափակվեց օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով կարգավորող նորմերը (27-րդ և 29-րդ հոդվածներ), ապա տպավորություն է ստեղծվում, թե պետական շահերի պաշտպանության գործառույթի կարիք այլևս չունենք, քանի որ այն մի գործառույթ է, որն առանց այդ էլ իրականացվում է ինչպես ներգերատեսչական մակարդակով՝ յուրաքանչյուր պետական մարմնի ներքին կառուցվածքային օղակների միջոցով (օրինակ՝ ներքին աուդիտ, վերահսկիչ-վերստուգիչ ստորաբաժանում, իրավաբանական ծառայություն և այլն), այնպես էլ՝ արտագերատեսչական մակարդակով՝ այլ պետական մարմինների լիազորությունների շրջանակներում: Օրենքի համաձայն պետական շահերի պաշտպանության հայց է ներկայացվում միայն այն դեպքերում, երբ վերը թվարկված կառույցները կամ չունեն նման լիազորություն, կամ էլ ողջամիտ ժամկետում նախազգուշացումից հետո ձեռնպահ են մնացել հայցի հարուցումից:

Հարկ է նկատել, որ օրենքի վերը նշված նորմերի իրավակարգավորումները և դրանց կիրառման պրակտիկան ցույց են տալիս, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատախազության պետական շահերի պաշտպանության ոլորտի լիազորությունն օրենքով անհիմն կերպով սահմանափակվել է բացառապես դատախազի կողմից իր լիազորություններն իրականացնելիս հայց հարուցելու հիմքերի հայտնաբերման հանգամանքով, ինչի արդյունքում ՀՀ դատախազությունն իր սահմանադրական լիազորությունն առավելապես իրականացնում է պետական շահերի խախտման մասին համապատասխան տեղեկատվության «առկայության» դեպքում: Մինչդեռ, ինչպես պրակտիկան է ցույց տալիս, պետական շահերի խախտման փաստերն շատ ավելին են, քան դրանց մասին դատախազությանը հասանելի դարձած տեղեկատվությունը: Ստացվում է, որ քննարկվող լիազորության թերի, սահմանափակ օրենսդրական կարգավորման հետևանքով դատախազության կողմից պետական շահերի

պաշտպանության սահմանադրական լիազորությունը, որն օրենքով սահմանափակման ենթակա չէ, պատշաճ կերպով չի իրականացվում, ինչը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ պետական շահերի և պետության համար:

Դատախազության գործառույթների իրականացման շրջանակներում բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունների (քաղաքացիաիրավական հարաբերություններում, վարչական, դատական (վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության շրջանակներում) և կատարողական վարույթներով և այլն) չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պետությանը կամ համայնքին գույքային և ոչ գույքային վնասներ են պատճառվել, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ այնքան ուշ է ստացվում, որ սպառված են լինում վարչական դատավարության կարգով դատարան դիմելու կամ քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելու վաղեմության ընդհանուր ժամկետները, իսկ երբեմն նույնիսկ՝ քրեական պատասխանատվության համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ժամկետները: Խնդիրը մասնակի լուծում կարող է ստանալ հրապարակայնության և թափանցիկության ընդհանուր սկզբունքի լիարժեք իրականացման պարագայում, երբ հանրային իշխանության բոլոր մարմինները հրապարակեն գաղտնիության ռեժիմով չսահմանափակված ողջ տեղեկատվությունը: Սակայն ներկայումս ո՛չ հասարակության և ո՛չ էլ անգամ՝ դատախազության կարիքների համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա կազմակերպությունների և դրանց մասնակցությամբ ընկերությունների գործունեության և փաստաթղթաշրջանառության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հրապարակայնության ու հասանելիության ապահովումը գործնականում օբյեկտիվ պատճառներով և՛ անհնար է և՛ ոչ նպատակահարմար՝ տեխնիկական, ֆինանսատնտեսական և մարդկային ռեսուրսների սահմանափակության պատճառով: Ավելին թեև Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով ի թիվս այլոց սահմանվում է տեղեկատվական տվյալների բազայից այդ թվում՝ էլեկտրոնային, անվճար օգտվելու իրավունք, սակայն բոլոր այդ լիազորություններից դատախազը կարող է օգտվել բացառապես վկայակոչված հոդվածի 2-րդ մասում նշված երկու դեպքերում: Ստացվում է «փակ շղթա»՝ գործառույթի իրականացումը հնարավոր է միայն իր լիազորություններն իրականացնելիս հայց հարուցելու հիմք հայտնաբերելիս, իսկ այդպիսի հստակ լիազորություններ նախատեսված չեն, և դատախազն էլ կաշկանդված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջներով: Արդյունքում, ինչպես արդեն նշվեց, պետական շահերի խախտումները գերակշռող մեծամասնությամբ կամ ընդհանրապես չեն բացահայտվում, արձանագրվում, կամ բացահայտման դեպքում անհնարին է դառնում խախտման վերացումը, վնասների վերականգնումը և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելը:

Հարկ է նշել նաև, որ օրենսդիրը սահմանափակել է «պետական շահի» հասկացությունը՝ դրանից, ըստ էության, հանելով համայնքային շահը այն հիմնավորմամբ, որ վերջինս պետական շահի հետ միասին կազմում են ավելի մեծ՝ հանրային շահի մի բաղադրիչը: Այս խնդրի վերաբերյալ ստորև ներկայացվող հիմնավորումներ՝

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև

Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

«Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության ձևերից մեկն է, որն իրականացվում է համայնքներում՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելու նպատակով: Ընդ որում, տեղական ինքնակառավարումը պետք է իրականացվի «Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Այսինքն, որքան էլ տեղական ինքնակառավարումն ունի ապակենտրոնացված, ինքնուրույն բնույթ, այնուամենայնիվ այն չի կարող համապետական սկզբունքներից ու շահերից առանձին լինել, չիրականացվել պետական մարմինների կազմակերպման ու գործունեության հիմքը կազմող հիմնարար սկզբունքներով:

«Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Ընդ որում համեմատած 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 103-րդ հոդվածում ամրագրված դատախազական լիազորությունների հետ՝ 176-րդ հոդվածում է հստակեցվել է, որ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության համար հայց հարուցելու լիազորությունը գործում է միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջնային լիազորությունն այս հարցում պատկանում է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում է պետությանը պատճառվել գույքային վնաս:

Գտնում ենք, որ «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ, ինչը հաստատվում է ինչպես «Վավերացրած միջազգային պայմանագրերով, այնպես էլ՝ ներպետական օրենսդրությամբ տրված սահմանումներով: Այսպես,

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածում սահմանվում է, որ տեղական ինքնակառավարում հասկացություն նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և իրական կարողությունը՝ կանոնակարգելու պետական գործերի զգալի մասը և կառավարելու այն, գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ և տեղի բնակչության շահերից ելնելով»:

«Սահմանադրության փոփոխությունների 186-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններին «Օրենսդրությամբ պատվիրակվում են պետական մարմիններին վերապահված լիազորությունները (մոտ մեկ

տասնյակ ոլորտներում 20-ից ավել լիազորություններ), ընդ որում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին:

Պրակտիկ հիմնավորումներ՝

Առանց դատախազների համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության՝ համայնքների նկատմամբ իրականացվող վերահսկողության պայմաններում առաջանում են համայնքային միջոցների անարդյունավետ տնօրինման էական ռիսկեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողությունը սահմանափակ է, ինչի կարող են առաջանալ հետևյալ իրավիճակները.

ա) Համայնքի ղեկավարի կողմից իրավախախտ գործողություններով համայնքին պատճառված վնասի դեպքում, երբ տվյալ պաշտոնատար անձի արարքը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի դիտարկվում որպես հանցագործություն (անցած են լինում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, վնասի չափը չի բավարարում քրեական պատասխանատվության ենթարկելու համար, կիրառվում է համաներման ակտ և այլն), ստացվում է մի իրավիճակ, որ համայնքի ղեկավարը պետք է համայնքի անունից հայց ներկայացնի իր դեմ (շահերի բախում) վնասի հատուցման պահանջով, իսկ նշված հայցը չներկայացնելու դեպքում չկա որևէ մարմին, որն իրավասու լինի օպերատիվ միջոցներ ձեռնարկելու հայցի հարուցումն ապահովելու համար:

բ) Նմանատիպ բազմաթիվ իրավիճակներ կարող են ի հայտ գալ նաև համայնքի քաղաքացիական իրավահարաբերություններում, երբ համայնքին պայմանագրային կամ արտապայմանագրային հարաբերություններով պատճառվի գույքային վնաս, իսկ համայնքի ղեկավարը համապատասխան միջոցներ չձեռնարկի կամ հայց չներկայացնի դատարան: Ընդ որում, պարտադիր չէ, որ համայնքի ղեկավարի կողմից հայց չներկայացնելու հանգամանքը պայմանավորված լինի դիտավորությամբ, քանի որ համայնքներում իրավաբանական բարձրագույն կրթությամբ մասնագետների բացակայության պայմաններում համայնքի ղեկավարները շատ հաճախ կարող են տեղյակ չլինել օրենսդրական կարգավորումներից, հայցային վաղեմության ժամկետներից, պայմանագրային կետանցների դեպքում տույժ և տուգանքներ գանձելու իրավունքներից և այլն: Օրինակ, համայնքներում գույքահարկի հաշվառման, գանձման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակի ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ բազմաթիվ համայնքներում առկա են փոխադրամիջոցների գույքահարկի գծով մեծ չափերի հասնող պարտքեր:

գ) Համայնքի ղեկավարներն օժտված են նաև վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ: Սակայն տվյալ դեպքում ևս նշվեց վարչական պատասխանատվության ենթարկված անձանցից գումարների գանձման գործընթացում համայնքի կողմից թերացումներ լինելու դեպքում դատախազությունից բացի չկա որևէ հսկող մարմին, որն իրավասություն ունենա ապահովելու վարչական պատասխանատվության ենթարկված անձանցից գումարների գանձումը: Ընդ որում, հարկ է նշել, որ տվյալ դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված են շատ սեղմ

Ժամկետներ վարչական պատասխանատվության սահմանող որոշումների կատարման համար: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

դ) Խնդրահարույց կարող է լինել նաև համայնքների կողմից համայնքների ոչ գույքային շահերի վերաբերյալ հայց ներկայացնելու գործընթացը, երբ համայնքի ղեկավարը չտեղեկացվածության, շահագրգռվածության կամ այլ պատճառներով հայց չի ներկայացնում դատարան, օրինակ՝ ինքնական շինարարությունը դադարեցնելու, դրա հետևանքները վերացնելու, համայնքի սեփականության ապօրինի տիրապետումը դադարեցնելու, ժառանգությունն ընդունելու հետ կապված պահանջներով («Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1124»), խնամակալության և հոգաբարձության մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված և այլ հայցերի ներկայացումը:

Պետք է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրության 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ դատական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները, իսկ նույն օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը կարող է իրականացնել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով: Նույն օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական հսկողությունը սահմանափակվում է բացառապես այդ լիազորությունների իրականացման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունը ստուգելով:

Այսինքն՝ կոնկրետ դեպքում համայնքի ղեկավարը ձևական առումով օրինական համարվող վարչական ակտը վիճարկելու իրավունք չունի, նման իրավունք վերապահված չէ նաև դատախազությանը, քանի որ 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը սահմանափակվում է պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հայցի հարուցմամբ:

Այդ իսկ պատճառով դատախազության՝ պետական շահերի պաշտպանության գործառույթները տեղական ինքնակառավարման մարմիններում ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ առումով ուղղակի անհրաժեշտություն են, որպիսի գործառույթների բացակայությունը ՀՀ բյուջետային միջոցների ծախսման գործընթացի նկատմամբ կարող է ունենալ զգալի բացասական ֆինանսական հետևանքներ, ինչպես նաև հասարակության շրջանում հանգեցնել պետական կառույցների նկատմամբ վստահության նվազման:

Հիշյալ համատեքստում կարևոր է նաև նկատի ունենալ, որ Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանվում են դատախազության լիազորությունները, որոնցից յուրաքանչյուրի իրականացման հիմքերն ու կարգը մանրամասնվում են մի շարք

նյութական և դատավարական իրավունքի նորմերով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով: Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ դատախազության կողմից օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու սահմանադրական լիազորությունը խիստ հատվածական և թերի սահմանված է ընդամենը «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածով: Մասնավորապես՝ դրա 2-րդ մասով սահմանվում են պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերը, սակայն դրանց առկայությունը կամ բացակայությունը պարզելու որևէ գործիքակազմ նախատեսված չէ, բացառությամբ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի:

Ակնհայտ է, որ Սահմանադրությունը չի կարող դատախազությանը վերապահել բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորություն՝ առանց նշված բացառիկ դեպքերը պարզելու օրենքով սահմանված համապատասխան կառուցակարգերի, որոնք կարող են իրացվել բացառապես սահմանադրական համապատասխան շրջանակներում և նպատակներով:

5. Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող կարգավորումները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվող լրացումները միտված են կարգավորելու դատախազների խմբի ստեղծման, դատախազական խմբի ղեկավարի դատավարական լիազորությունների հստակեցման հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես, առաջարկվում է օրենսդրորեն սահմանել այն հանգամանքը, որ դատախազական խմբի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս խմբի ղեկավարը հանդիսանում է վերադաս դատախազական խմբի մեջ մտնող այլ դատախազների նկատմամբ, ինչպես նաև հստակեցնել դատախազական խմբի ղեկավարի դատավարական լիազորությունները:

Օրենքի հիշյալ հոդվածում առաջարկվում է նաև սահմանել ստորադաս դատախազի վարույթից գործը մեկ այլ դատախազի կամ իր վարույթ տեղափոխելու անմիջական վերադաս դատախազի լիազորության իրականացումը պրակտիկայում շատ հաճախ հանդիպող այն դեպքերի համար, երբ դատախազը իր աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով օբյեկտիվորեն չի կարողանում պատշաճ կերպով իրականացնել իր լիազորությունները կամ տեղափոխվում է ՀՀ դատախազության համակարգի այլ ստորաբաժանում:

6. Նախագծի 7-րդ և 8-րդ հոդվածները կոչված են հստակեցնելու դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները, քանի որ պրակտիկայում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, որոնք Օրենքի առկա կարգավորումները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացնում որևէ անձ, ում 22 տարին դիցուք լրանալու է 2 ամիս անց: Տվյալ իրավիճակում Օրենքը չի պարունակում հստակ կարգավորումներ, թե արդյոք տվյալ անձը կարող է մասնակցել մրցույթին, թե ոչ, քանի որ 22 տարին լրացած լինելը վերաբերում է դատախազ նշանակվելու ընդհանուր պահանջներին, այլ ոչ թե դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հնարավորությանը:

7. Առաջարկվում է նաև Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթը շարադրել «Հայաստանի Հանրապետության դատական

օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 113-րդ հոդված 2-րդ մասի 7-րդ կետի և 160-րդ հոդված 1-ին մասի 4-րդ կետի տրամաբանությանը համահունչ: Մասնավորապես, Դատական օրենսգրքի հիշյալ հոդվածների համաձայն՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձը հանվում է ցուցակից, եթե, ի թիվս այլնի, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով, իսկ դատավորի լիազորությունները դադարեցվում են, եթե, ի թիվս այլնի, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով: Այլ կերպ ասած, բացակայում է քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով չիրականացնելու վերաբերյալ դրույթը իբրև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձին ցուցակից հանելու կամ դատավորի լիազորությունները դադարեցնելու հիմք: Ուստի, անհրաժեշտ է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 62-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և 63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը շարադրել նույն տրամաբանությամբ՝ առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ հաճախ միջազգային փաստաթղթերում ընդգծվում է դատավորներին տրամադրվող երաշխիքները նմանապես դատախազների վրա տարածելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (Consultative Council of European Prosecutors - CCPE) 2018թ. նոյեմբերի 23-ին ընդունված «Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը և էթիկան» փաստաթղթի¹ 14-րդ կետում նշվում է, որ. «Հաշվի առնելով դատավորների և դատախազների առաքելությունների նմանությունը և փոխլրացնող բնույթը, ինչպես նաև պաշտոնավարման պայմաններին և կարգավիճակին ներկայացվող պահանջները, դատախազները պետք է ունենան այնպիսի երաշխիքներ, որոնք համանման են դատավորներին տրամադրվող երաշխիքներին (Taking into account the proximity and complementary nature of the missions of judges and prosecutors, as well as of requirements in terms of their status and conditions of service,² prosecutors should have guarantees similar to those for judges)»:

8. Նախագծի 11-րդ հոդվածով դատախազության պաշտոնների դասակարգման առաջարկվող տարբերակը պայմանավորված է ՀՀ դատախազության ստորաբաժանումների (ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարածքային) ավագ դատախազների և դատախազների՝ միևնույն պաշտոնների խմբում չընդգրկելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ինչպես աշխատավարձերի տարբերությունը, այնպես էլ պաշտոնական պարտականությունների շրջանակը: Բացի այդ, Օրենքի գործող կարգավորումների պարագայում կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետի պաշտոնը, որպես զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար, ընդգրկված է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, իսկ կայազորի զինվորական դատախազի պաշտոնը նույն մասի 4-րդ կետում: Այսինքն, կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետն ընդգրկված է ավելի ցածր պաշտոնների ենթախմբում, քան կայազորի զինվորական դատախազը, որի ենթակայության ներքո գտնվող ստորաբաժանման աշխատանքները վերջինս ի պաշտոնե կոչված է վերահսկել, ինչն անտրամաբանական է:

¹ Հասանելի է <https://www.coe.int/en/web/ccpe/opinions/adopted-opinions> հղմամբ:

² Տե՛ս՝ նաև Opinion No. 9 (2014) of the CCPE, Explanatory Note to the Rome Charter, paragraph 53.

Ըստ այդմ, հաշվի առնելով դատախազների պաշտոնների աստիճանակարգության փոփոխությունները, համապատասխան փոփոխություններ է անհրաժեշտ կատարել նաև Օրենքի 39-րդ և 42-րդ հոդվածներում:

Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրել դատախազների խումբ ստեղծելու իրավական հիմքերը, դատախազների խմբի ղեկավարի և անդամների դատավարական լիազորությունները:

Նախագծում առաջարկվող մյուս փոփոխություններն ու լրացումները ածանցյալ են վերը թվարկված փոփոխություններից և լրացումներից:

3. Նախագիծը մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել են ՀՀ գլխավոր դատախազության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է լրացնել ՀՀ օրենսդրության մեջ առկա մի շարք բացերը և ոչ ամբողջական կարգավորումները՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ դատախազության գործունեության արդյունավետությունը:

Նախագծերի ընդունմամբ հստակորեն կսահմանազատվեն նաև դատախազների խմբի ղեկավարի և անդամների լիազորությունների շրջանակները:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Նախագծերը կապված չեն ռազմավարական փաստաթղթերի հետ: